Արձանագրություն N 2

«ՍՄ-ԲԸԱՀԱՇՁԲ 17/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Կապան «14» մարտ 2017թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գասպարյան
Հանձնաժողովի անդամներ Ժ. Բաբայանը և Ն. Մովսիսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մկրտչյան

Ի. Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Մ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Բացման նիստի ժամանակ հանձնաժողովը չի կարողացել գնահատել ընթացակարգի հետևյալ մասնակիցների ներկայացրած հայտերը՝ <<ՎԻԼՀԱՄ>> ՍՊԸ, <<Ռազ-Բիլդինգ>> ՍՊԸ և <<Հազարաշեն>> ՍՊԸ: Սյունիքի մարզպետարանը դիմել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, պարզաբանում ստանալու նշված դեպքի առիթով: Մինչ պարզաբանում ստանալը ընթացակարգը սառեցվել է:

Ըստ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության N 034/2838-17 գրության <<ՎԻԼՀԱՄ>> ՍՊԸ-ի, <<Ռազ-Բիլդինգ>> ՍՊԸ-ի և <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը ենթակա չեն գնահատման, որի հիման վրա հայտերը մերժվել են:

2. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	-	Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Նորատուս Սարալանջի 1 Էլ. Հասցե՝ info@haldi.am
2.	«Հարսնաձոր» ՍՊԸ	-	Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս Սյունիքի 96, Էլ. Հասցե՝ g.g.parsyan@yandex.ru

բ/ սահմանված ժամկետում, սակայն սահմանված կարգի պահանջներին անհամապատասխան հայտեր են ներկայացրել «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն և «Հարսնաձոր» ՍՊԸ-ն,

գ/ մասնակիցների կողմից առաջարկված գները պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով հետևյալն են.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
		Գինն առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ	Ընդհանուր	
Չափաբաժին 4					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	2700000	540000	3240000	3300000
Չափաբաժին 9					
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1450000	290000	1740000	1800000
Չափաբաժին 10					
1	<<Հարսնաձոր>> ՍՊԸ	1485000	297000	1782000	1800000

դ/ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

- համապատասխանում են՝ <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ –ի և <<Հարսնաձոր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «Բավարար»,

- չի համապատասխանում՝ <<ՎԻԼՀԱՄ>> ՍՊԸ-ի, <<Ռազ-Բիլդինգ>> ՍՊԸ-ի և <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվելով «Անբավարար» մերժվել են հետևյալ հիմնավորմամբ՝ նշված մասնակիցների կողմից ներկայացված հայտերը սխալ են ներկայացվել www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով, ինչի հետևանքով կայքը թույլ չի տալիս բացել և գնահատել ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- սույն ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ 8-րդ և 11-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

- սույն կետում նշված չափաբաժինների համար հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողը ամփոփեց մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

- հայտերը գնահատվել են «ՍՄ-ԲԸԱՀԱՇՁԲ 17/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են ՝ <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ-ի և <<Հարսնաձոր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնահատվել են «Բավարար»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Հանձնաժողովը որոշեց.

- ընտրված մասնակիցներ ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով՝ <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ-ին և <<Հարսնաձոր>> ՍՊԸ-ին:

- ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն առաջարկել <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների համար, և <<Հարսնաձոր>> ՍՊԸ-ին 10-րդ չափաբաժնի համար կնքել N «ՍՄ-ԲԸԱՀԱՇՁԲ 17/1» ծածկագրով պայմանագրեր:

6. ա) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին,

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր, կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի է) պարբերության համաձայն անգործության ժամկետ չկիրառել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

II. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Գասպարյան)

1. «ՍՄ-ԲԸԱՀԱՇՁԲ 17/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային

օրը ժամը 16:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան 3-րդ հարկ, N309 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Գասպարյան

Անդամ՝ _____ Ժ. Բաբայան

_____ Ն. Մովսիսյան

Քարտուղար՝ _____ Տ. Մկրտչյան